ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"21" Մարտի 2024թ. N 518-Ա

ՀՐԱՄԱՆ

ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.2-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-ին կետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել աղբի հավաքման և փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների համար գործունեության պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3/21/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք.Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2024 թվականի «21» մարտի N 518-Ա հրամանի

ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն պայմանները սահմանում են Հայաստանի Հանրապետության տարածքում աղբահանության ոլորտում ներգրավվող կազմակերպությունների, մասնավորապես աղբի հավաքման և փոխադրման գործընթացների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն պայմանների սահմանումը բխում է գոյացող աղբի պատշաճ հավաքման և փոխադրման ընթացքում էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովման անհրաժեշտությունից: Սույն պայմաններում «աղբ» հասկացությունը կիրառվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով սահմանված իմաստով և «Թափոնների մասին» օրենքով սահմանված «կոշտ կենցաղային թափոն» հասկացության իմաստով:

3. Սույն պայմանների կիրառումը պարտադիր են տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար, որոնք իրականացնում են աղբի հավաքման ու տեղափոխման գործառույթները:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույն պայմանների կիրառմամբ նախատեսվում է բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմամբ նախադրյալներ ստեղծել բնակչությանը կայուն, հուսալի և պարտադիր աղբահանության ծառայություններ մատուցելու համար:

5. Սույն պայմանների կիրառման նպատակն է ապահովել աղբի պատշաճ հավաքումը, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բարելավումը, համապատասխան հագեցվածությամբ աղբահանության ծառայությունների ապահովումը,

ինչպես նաև սույն պայմանների սահմանմամբ առաջարկվում է ներդնել վերահսկողական մեխանիզմներ:

3. ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ և ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Աղբի հավաքման և փոխադրման համար համայնքային հիմնարկների կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրվող օպերատորի, կամ «Պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրով սահմանված կարգով իրականացնող օպերատորի (այսուհետ՝ Կազմակերպության) գործունեության համար անհրաժեշտ է՝

1) ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 30-ի N 121-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիայի և համապատասխան ներդիրների առկայությունը.

2) Կազմակերպության կողմից օգտագործվող մեքենամեխանիզմների և սարքավորումների սեփականության կամ վարձակալության իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայությունը.

3) Աղբի հավաքման և փոխադրման աշխատանքներում ներգրավված աշխատակիցների՝ Կազմակերպության հետ աշխատանքային հարաբերությունները հավաստող փաստաթղթերի առկայությունը:

7. Երկարաժամկետ ներդրումների իրականացման նպատակով՝ աղբի հավաքման և փոխադրման ծառայությունների մատուցման համար կնքվում է պայմանագիր առնվազն մեկ տարով, բացառությամբ համայնքային հիմնարկների դեպքում:

8. Կազմակերպության տեխնիկական հագեցվածությունը, այդ թվում աղբահանության հատուկ մեքենամեխանիզացիայի քանակն ու տեսակը որոշվում է՝ հաշվի առնելով տվյալ բնակավայրի տարածքի չափերը, բնակչության թիվը և գոյացող աղբի ծավալները, ինչպես նաև մեքնամեխանիզացիայի անսարքության հնարավոր դեպքերը: Մասնավորապես կազմակերպության մեքենամեխանիզացիայի նվազագույն պահանջները հետևյալն են.

1) քաղաքային համայնքների դեպքում՝

ա. հետևի կամ կողային բարձումով, սեղմման հատկանիշով, առնվազն 7մ^3 տարողունակությամբ, մինչև 1,1 մ^3 տարողունակությամբ աղբարկղերի դատարկման հնարավորությամբ՝ կահավորված ավելներով, թիակներով, բահերով և այլ միջոցներով՝ առնվազն 3 հատ,

բ. բազմաֆունկցիոնալ մեքենաներ՝ առնվազն ավլելու/փոշեհավաքման, ջուր/աղ ցանելու, ձնամաքրման հնարավորությամբ կամ համապատասխան միջոցներով կահավորված բեռնատար և ջրցան մեքենաներ սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման նպատակով՝ առնվազն 2 հատ.

2) Գյուղական համայնքների դեպքում՝ ինքնաթափ՝ առնվազն 5 մ^3 տարողունակությամբ՝ փակ թափքով՝ կահավորված ավելներով, թիակներով, բահերով և այլ միջոցներով՝ առնվազն 2 հատ:

9. Կազմակերպությունը պետք է ապահովված լինի աղբի հավաքման, սանիտարական մաքրման համար անհրաժեշտ գույքով, պարագաներով, ինչպես նաև ախտահանիչ նյութերով:

10. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում աշխատակիցների «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ապահովման համար:

11. Կազմակերպությունն ապահովում է յուրաքանչյուր աղբահավաք մեքենայի հաշվով առնվազն երկու աշխատակցի, այդ թվում՝ վարորդ և առնվազն մեկ բանվոր:

12. Սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնելու դեպքում Կազմակերպությունն ապահովում է յուրաքանչյուր 3000-5000 քառակուսի մետրի հաշվով առնվազն 1 աշխատակցի:

13. Վարակներից, մեխանիկական վնասվածքներից պաշտպանվելու նպատակով՝ Կազմակերպության աշխատակիցները պետք է ապահովված լինեն համապատասխան պաշտպանիչ և լուսային անդրադարձիչով արտահագուստով:

4. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

14. Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների և աղբի պատշաճ հեռացման ծառայությունների ապահովման նպատակով աղբահանության ոլորտի լիազոր մարմնին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին ըստ անհրաժեշտության տեղեկատվություն է տրամադրվում Կազմակերպության գործունեության համապատասխանելիության վերաբերյալ, մասնավորապես՝

1) մեքենամեխանիզացիայի համապատասխանելիության և դրանց աշխատունակության մասով,

2) աշխատակիցների արտահագուստի և անհրաժեշտ այլ պարագաների առկայության մասով,

3) համայնքին և բնակչությանը մատուցվող ծառայության որակի համապատասխանելիության մասով:

15. Տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում արձանագրված թերությունների դեպքում առաջարկվում է Կազմակերպությանը վերացնել դրանք և/կամ համապատասխանեցնել սահմանված նորմերին: